**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ «ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՃԱԽԱՓՆՅԱ ԹԱՂԱՄԱՍԻ 4 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ (2-ՐԴ ՓՈՒԼ) ՏԱՆԻՔԱԾԱԾԿՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ» ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ» ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՋԳՀ-ԾՁԲ-2017/5**

ք. Երևան «11» դեկտեմբերի 2017թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս գործադիր տնօրեն Աշոտ Կիրակոսյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Պռոշաբերդշին ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կարապետ Մովսիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է *«Ջերմուկ համայնքում Ճախափնյա թաղամասի 4 բնակելի շենքերի (2-րդ փուլ) տանիքածածկույթի փոխարինման աշխատանքներ»-ի ընթացքում տեխնիկական վերահսկողության ծառայությունների մատուցման* պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի և ծավալաթերթ-նախահաշվի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին և ծավալաթերթ-նախահաշվին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում

թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով1:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

1 *Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **370,000 (երեք հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

**5.2** Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից

գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[3]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուժանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում նախատեսվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի  կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան  պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ

համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 30 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ<br>Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,<br>Կ.Ուլնեցու 31<br>ՀՎՀՀ՝ 00846441<br>ՀՀ՝ 1510032335590100<br>ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ<br>Գործադիր տնօրեն<br>Աշոտ Կիրակոսյան<br>-------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | «Պռոշաբերդշին» ՍՊԸ<br>Հասցեն՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գյուղ Գլաձոր<br>ՀՎՀՀ՝ 08910676<br>ՀՀ՝ 163538001609<br>«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ<br>Եղեգնաձորի մ/ճ<br>Տնօրեն<br>Կարապետ Մովսիսյան<br>-------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*« 11 » դեկտեմբերի 2017 թ. կնքված*
*ՋԳՀ-ԾՁԲ-2017/5 ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| համարը | (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը* |
| 1 | 71351540 | տեխնիկական վերահսկողության ծառայություն | դրամ | 370,000 | 1 | Ջերմուկ համայնք | Շինարարական աշխատանքների սկզբից մինչև ավարտ |

| | |
|---|---|
| *Ծրագրի անվանումը* | «Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի 4 բնակելի շենքերի (2-րդ փուլ) տանիքածածկույթի փոխարինման աշխատանքներ» |
| *Ֆինանսավորման աղբյուր* | 2017թ. ՀՀ պետական բյուջե |
| *Պատվիրատու* | Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ |
| *Ծառայության անվանումը* | «Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի 4 բնակելի շենքերի (2-րդ փուլ) տանիքածածկույթի փոխարինման աշխատանքներ»-ի ընթացքում տեխնիկական վերահսկողության ծառայություն |
| *Աշխատանքի տեսակը* | Ըստ նախագծի |
| *Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ* | • Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. ՙՇինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ՚ հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում (ընդ որում տեխնիկական հսկիչը պետք է ընդգրկված լինի Ծառայությունը մատուցողին տրված լիցենզիայի պատասխանատու անձանց ներդիրում: Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:<br>• Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին<br>• Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը<br>• Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պահանջներին<br>• Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի<br>• Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար<br>• Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար |

| | |
|---|---|
| | • Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով<br>• Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը)<br>• Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը<br>• Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր)<br>• Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը: |
| *Հաշվետվության ներկայացման պահանջներ* | • Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ <u>ընթացիկ և ավարտական հաշվետվություններ</u>, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:<br>• <u>*Ընթացիկ հաշվետվությունները*</u> ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր):<br><u>*Ավարտական հաշվետվությունը*</u> պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով)<br>• <u>*Ընթացիկ հաշվետվությունները*</u> ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:<br>• <u>*Ավարտական հաշվետվությունը*</u> ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում: |
| *Նորմատիվային պահանջներ* | Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն<br>• ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի |

| | |
|---|---|
| | • Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի<br>• ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշման |

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[4]

«Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի 4 բնակելի շենքերի (2-րդ փուլ) տանիքածածկույթի փոխարինման աշխատանքներ» աշխատանքների կատարման

| NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը | Ընդամենը /հազ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **Բնակելի շենք N10 /76x12/մ հատակագծային չափերով** | | | | |
| | Քանդման աշխատանքներ | | | | |
| 1 | Տանիքածածկույթի տակ գոյացած շին աղբի հավաքում, մաքրում, իջեցում և բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ | տն | 41.000 | 4.36 | 178.66 |
| 2 | Քառալանջ տանիքի սև թիթեղյա ծածկույթի քանդում | մ² | 1021.00 | 0.11 | 107.39 |
| 3 | Ծպեղնավոտքի ապամոնտաժում | գմ | 170.000 | 0.15 | 25.23 |
| 4 | Որմնափայտի ապամոնտաժում | գմ | 20.000 | 0.15 | 2.97 |
| 5 | Կավառամածի (այդ թվում հոծ) քանդում | մ² | 1021.00 | 0.08 | 81.65 |

[4] Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ բոլոր աշխատանքների կատարման արժեքների:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 6 | Շին աղբի հավաքում ,մաքրում, իջեցում և բարձում ավտոինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ | տն | 4.600 | 4.36 | 20.04 |
| | Շին վերանորոգման աշխատանքներ | | | | |
| 7 | Տանիքի փայտե նոր կառուցվածքների տեղադրում մշակված հականեխիչ նյութով | մ³ | 7.200 | 245.59 | 1768.25 |
| 8 | Տանիքի փայտե  կառուցվածքների տեղադրում օգտագործելով հին փայտանյութը | մ³ | 0.650 | 245.59 | 159.63 |
| 9 | Նոր կանգնակների տակ B12,5դասի բետոնից հենարանների պատրաստում | մ³ | 1.200 | 55.48 | 66.58 |
| 10 | Կավառամածի պատրաստում 50x50մմ փայտե չորսուներով (6,68մ3 փայտանյութի ծախսով) | մ² | 936.000 | 1.96 | 1837.04 |
| 11 | Հոծ տախտակամածի պատրաստում 50x150մմ տախտակներից (4,26մ3 փայտանյութի ծախսով), (567x0,15)մ2 | մ² | 85.000 | 10.14 | 861.49 |
| 12 | Տանիքածածկույթի պատրաստում 0.5մմ հաստությամբ գունավոր մետաղակղմինդրով | մ² | 1021.00 | 8.01 | 8173.80 |
| 13 | Պիպերի երեսապատում հարթ 0,55մմ հաստ ցինկապատ գունավոր թիթեղից | մ² | 37.000 | 7.60 | 281.35 |
| 14 | Մակլաանի օդափոխության պատուհանների տեղադրում բացվող շերտափեղկով /4հատ, 0.7x0.9/ | մ² | 2.620 | 28.57 | 72.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 15 | Ջերմամեկուսիչ շլաքի շերտի պատրաստում /լրացուցիչ/ | մ$^3$ | 102.41 | 7.47 | 764.55 |
| 16 | 1.5մ երկարությամբ ձնապաշտպանի տեղադրում /ձնարգել/ | գմ | 45.000 | 4.06 | 182.81 |
| 17 | Տանիքի անվտանգության ճաղաշարի տեղադրում H=0.6մ | գմ | 173.000 | 5.30 | 916.55 |
| 18 | Փայտամածի հակահրդեհային պաշտպանություն /այդ թվում առկա/ | մ$^3$ | 41.000 | 17.83 | 730.83 |
| 19 | Կավարամածի հակահրդեհային պաշտպանություն | մ$^2$ | 1021.00 | 0.58 | 587.60 |
| | **Բնակելի շենք N12 /58x12/մ հատակագծային չափերով** | | | | |
| | *Քանդման աշխատանքներ* | | | | |
| 1 | Տանիքածածկույթի տակ՝ փռված շին. աղբի հավաքում, մաքրում, իջեցում և բարձում ավտոինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ | տն | 31.000 | 4.36 | 135.08 |
| 2 | Քառալանջ տանիքի սև թիթեղյա ծածկույթի քանդում | մ$^2$ | 780.000 | 0.11 | 82.04 |
| 3 | Ծպեղնավորոքի ապամոնտաժում | գմ | 129.000 | 0.15 | 19.15 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 4 | Որմնափայտի ապամոնտաժում | գմ | 14.500 | 0.15 | 2.15 |
| 5 | Կավառամածի (այդ թվում հոծ) քանդում | մ² | 780.000 | 0.08 | 62.38 |
| 6 | Շին աղբի հավաքում ,մաքրում, իջեցում և բարձում ավտոինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ | տն | 3.200 | 4.36 | 13.94 |
| | Շին վերանորոգման աշխատանքներ | | | | |
| 7 | Տանիքի փայտե նոր կառուցվածքների տեղադրում մշակված հականեխիչ նյութով | մ³ | 5.300 | 245.59 | 1301.63 |
| 8 | Տանիքի փայտե կառուցվածքների տեղադրում օգտագործելով հին փայտանյութը | մ³ | 0.500 | 245.59 | 122.80 |
| 9 | Նոր կանգնակների տակ B12,5դասի բետոնից հենարանների պատրաստում | մ³ | 0.800 | 55.48 | 44.39 |
| 10 | Կավառամածի պատրաստում 50x50մմ փայտե չորսուներով (5,11մ3 փայտանյութի ծախսով) | մ² | 715.500 | 1.96 | 1404.28 |
| 11 | Հոծ տախտակամածի պատրաստում 50x150մմ տախտակներից (3,23մ3 փայտանյութի ծախսով). (430x0,15)մ2 | մ² | 64.500 | 10.14 | 653.72 |
| 12 | Տանիքածածկույթի պատրաստում 0.5մմ հաստությամբ գունավոր | մ² | 780.000 | 8.01 | 6244 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | մետաղակղմինդրով | | | | .43 |
| 13 | Պիպերի երեսապատում հարթ 0,55մմ հարթ ցինկապատ գունավոր թիթեղից | մ$^{2}$ | 28.000 | 7.60 | 212.91 |
| 14 | Մ/պլաստե օդափոխության պատուհանների տեղադրում բացվող շերտափեղկով /4հատ, 0.7x0.9/ | մ$^{2}$ | 2.520 | 28.57 | 72.00 |
| 15 | Ջերմամեկուսիչ շլաքի շերտի պատրաստում /լրացուցիչ/ | մ$^{3}$ | 79.16 | 7.47 | 590.99 |
| 16 | 1.5մ երկարությամբ ձնապաշտպանի տեղադրում /ձնարգել/ | գմ | 35.000 | 4.06 | 142.18 |
| 17 | Տանիքի անվտանգության ճաղաշարի տեղադրում H=0.6մ | գմ | 137.000 | 5.30 | 725.82 |
| 18 | Փայտամածի հակահրդեհային պաշտպանություն /այդ թվում առկա/ | մ$^{3}$ | 30.540 | 17.83 | 544.38 |
| 19 | Կավարամածի հակահրդեհային պաշտպանություն | մ$^{2}$ | 780.000 | 0.58 | 448.90 |
| | **Բնակելի շենք N13 /58x12/մ հատակագծային չափերով** | | | | |
| | Քանդման աշխատանքներ | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տանիքածածկույթի տակ գոյացած շին աղբի հավաքում, մաքրում, իջեցում և բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ | տն | 31.000 | 4.36 | 135.08 |
| 2 | Քառալանջ տանիքի սև թիթեղյա ծածկույթի քանդում | մ² | 780.000 | 0.11 | 82.04 |
| 3 | Ծպեղնավորոի ապամոնտաժում | գմ | 129.000 | 0.15 | 19.15 |
| 4 | Որմնափայտի ապամոնտաժում | գմ | 14.500 | 0.15 | 2.15 |
| 5 | Կավառամածի (այդ թվում հոծ) քանդում | մ² | 780.000 | 0.08 | 62.38 |
| 6 | Շին աղբի հավաքում ,մաքրում, իջեցում և բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ | տն | 3.200 | 4.36 | 13.94 |
| | Շին վերանորոգման աշխատանքներ | | | | |
| 7 | Տանիքի փայտե նոր կառուցվածքների տեղադրում մշակված հականեխիչ նյութով | մ³ | 5.350 | 245.59 | 1313.91 |
| 8 | Տանիքի փայտե կառուցվածքների տեղադրում օգտագործելով հին փայտանյութը | մ³ | 0.500 | 245.59 | 122.80 |
| 9 | Նոր կանգնակների տակ B12,5դասի բետոնից հանարանների պատրաստում | մ³ | 0.800 | 55.48 | 44.39 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10 | Կավարամածի պատրաստում 50x50մմ փայտե չորսուներով (5,11մ3 փայտանյութի ծախսով) | մ² | 715.500 | 1.96 | 1404.28 |
| 11 | Հոծ տախտակամածի պատրաստում 50x150մմ տախտակներից (3,23մ3 փայտանյութի ծախսով), (430x0,15)մ2 | մ² | 64.500 | 10.14 | 653.72 |
| 12 | Տանիքածածկույթի պատրաստում 0.5մմ հաստությամբ գունավոր մետաղակղմինդրով | մ² | 780.000 | 8.01 | 6244.43 |
| 13 | Պիպերի երեսապատում հարթ 0,55մմ հարթ ցինկապատ գունավոր թիթեղից | մ² | 28.000 | 7.60 | 212.91 |
| 14 | Մ/պլաստե օդափոխության պատուհանների տեղադրում բացվող շերտափեղկով /4հատ, 0.7x0.9/ | մ² | 2.520 | 28.57 | 72.00 |
| 15 | Ջերմամեկուսիչ շլաքի շերտի պատրաստում /լրացուցիչ/ | մ³ | 70.28 | 7.47 | 524.66 |
| 16 | 1.5մ երկարությամբ ձնապաշտպանի տեղադրում /ձնարգել/ | գմ | 35.000 | 4.06 | 142.18 |
| 17 | Տանիքի անվտանգության ճաղաշարի տեղադրում H=0.6մ | գմ | 137.000 | 5.30 | 725.82 |
| 18 | Փայտամածի հակահրդեհային պաշտպանություն /այդ թվում ատկա/ | մ² | 30.540 | 17.83 | 544.38 |
| 19 | Կավարամածի հակահրդեհային պաշտպանություն | մ² | 780.000 | 0.58 | 448.90 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | **Բնակելի շենք N26 /20x20/մ հատակագծային չափերով /հարթ թիթեղածածկույթով/** | | | | |
| 1 | Առկա քայքայված թիթեղյա ծածկույթի փոխարինում նոր 2մմ հաստությամբ հարթ թիթեղով | մ$^2$ | 25.000 | 10.42 | 260.51 |
| 2 | Առկա թիթեղածածկույթի հին ներկի հղկում մաքրում մետաղական խոզանակով /այդ թվում պարապետային հատվածների/ | մ$^2$ | 490.000 | 1.26 | 617.34 |
| 3 | Տանիքածածկույթի 2 շերտ հակակոռոզիոն ներկում | մ$^2$ | 490.000 | 1.23 | 600.63 |
| | Ընդամենը | | | | 43889.17 |
| | Շահույթ | 11% | | | 4827.81 |
| | Ընդամենը | | | | 48716.98 |
| | ԱԱՀ | 20% | | | 9743.40 |
| | Ընդամենը | | | | 58460.37 |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ՝ 1510032335590100
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Ռոռշաբերդշին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գյուղ Գլաձոր
ՀՎՀՀ՝ 08910676
ՀՀ՝ 163538001609
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Եղեգնաձորի մ/ճ
Տնօրեն
Կարապետ Մովսիսյան

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 2*
*« 11 » դեկտեմբերի 2017 թ. կնքված*
*ՋԳՀ-ԾՁԲ-2017/5 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | |
|---|---|---|---|---|---|
| համարը | (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | |
| | | | հունիս | մայիս | Ընդամենը |
| 1 | 71351540 | տեխնիկական վերահսկողության ծառայություն | 370,000 | 370,000 | 370,000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ՝ 1510032335590100
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Պողշաբերդշին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գյուղ Գլաձոր
ՀՎՀՀ՝ 08910676
ՀՀ՝ 163538001609
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Եղեգնաձորի մ/ճ
Տնօրեն
Կարապետ Մովսիսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված 3*
*« 11 » դեկտեմբերի 2017 թ. կնքված*
*ՋԳՀ-ԾՁԲ-2017/5 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը __________ | գտնվելու վայրը __________ |
| հհ ________________ | հհ________________ |
| ____________________ | ____________________ |
| հվհհ ________________ | հվհհ________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «            » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ____________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________ է 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս____________________________________, հիմք ընդունելու Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________________» 20 թ. կազմված՝ գնման հայտ նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |

*Հավելված 3.1*
*« 11 » դեկտեմբերի 2017 թ. կնքված*
*ՋԳՀ-ԾՁԲ-2017/5 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ ____________-ի

Պատվիրատուի անունը
Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ___________________________ -ին կնքված N _____________ _____

պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _______-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

*Հավելված 10*
*«ՋԳՀ-ՇՉԲ-2017/5»* ծածկագրով*
*գնանշման հարցման հրավերի*

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «11» դեկտեմբերի 2017 թ.**

<<Պռոշաբերդշին>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրենի՝ Կարապետ Մովսիսյանի (անձնագիր՝ AH0633568, տրվ.24.07.2008թ, 037 կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ***Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի*** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *«ՋԳՀ-ՇՉԲ-2017/5»* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ :

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

### 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Պռոշաբերդշին» ՍՊԸ
ընկերության անվանումը

ՀՀ Վայոց Ձորի մարզ, գյուղ Գլաձոր
ընկերության հասցեն

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Եղեգնաձորի մ/ճ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

163538001609
ընկերության բանկային հաշվեհամարը

08910676
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Կարապետ Մովսիսյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը ընթացակարգում հրապարակելը:*
*** լրացվում է մասնակցի կողմից*

1.

## ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[28] N

*(պայմանագրի կատարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Պռոշաբերդշին» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Եղեգնաձորի մ/ճ

5. Վճարողի հաշվի համարը՝ 163538001609

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 08910676

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 00846441

10. Շահառուի բանկը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/1510032335590100

12. Գումարը թվերով և բառերով՝ 37 000/երեսունյոթ հազար/

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ /AMD/

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի ապահովում

15. Պայմանագրի ծածկագիրը՝ *«ՋԳՀ-ԾՁԲ-2017/5»*

16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝ --- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները

/____________________/

/____________________/

19.բ.

Կ.Տ.

18.ա. Վճարողի ստորագրությունները՝

/____________________/

/____________________/

18.բ.

Կ.Տ.

Կատարված է շահառուի բանկի կողմից

20.ա. /____________________/

/ստորագրություն/

20.բ. Կ.Տ.

"___" ___ 20___ թ.

Կատարված է վճարողի բանկի կողմից

21.ա. /____________________/

/ստորագրություն/

21.բ. Կ.Տ.

22. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.

---

[28] Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»: